ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 044-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Ազգային ժողովի խորհուրդը **որոշում է**.

Ազգային ժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում լրագրողների հավատարմագրման կարգը հաստատելու մասին» թիվ 044-Լ որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

2024 թվական, դեկտեմբերի 2
Երևան
ԱԺԽՈ-062-Լ

Հավելված
Ազգային ժողովի խորհրդի
2024 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 062-Լ որոշման

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳ

1. Սույն կարգը սահմանում է «Զանգվածային լրատվության մասին» օրենքով նախատեսված՝ լրատվական գործունեություն իրականացնող լրագրողի (այսուհետ՝ լրագրող)՝ Ազգային ժողովում հավատարմագրման հետ կապված հարաբերությունները:

2. Լրագրողների հավատարմագրումն Ազգային ժողովում իրականացվում է «Զանգվածային լրատվության մասին» օրենքին և սույն կարգին համապատասխան:

Հավատարմագրված լրագրողի գործունեությունն Ազգային ժողովի տարածքում կարգավորվում է «Զանգվածային լրատվության մասին» օրենքով, սույն կարգով և այլ իրավական ակտերով՝ խոսքի ազատության ապահովման նպատակով և միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին համապատասխան:

3. Ազգային ժողովի հերթական նստաշրջանը սկսվելուց առնվազն քսան օր առաջ Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվում է հայտարարություն հավատարմագրումը սկսելու մասին:

Հայտարարության մեջ նշվում է դիմումների ներկայացման վերջնաժամկետը:

4. Ազգային ժողովի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) լրագրողի հավատարմագրումը կատարում է դիմումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Հավատարմագրման գործընթացն ավարտվում է Ազգային ժողովի հերթական նստաշրջանը սկսվելուց առնվազն երեք օր առաջ:

5. Լրագրողին հավատարմագրելու նպատակով լրատվական գործունեություն իրականացնողը Աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է գրավոր դիմում, որը ներառում է՝

1) լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը, գտնվելու վայրի հասցեն, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի քաղվածքի պատճենը (սկանավորված տարբերակը), իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ ազգանունը, անունը, հայրանունը (եթե հայրանունը նշված է անձնագրում), հանրային ծառայությունների համարանիշը, մշտական բնակության վայրի հասցեն և անձնագրի պատճենը (սկանավորված տարբերակը).

2) հավատարմագրման ներկայացվող լրագրողի ազգանունը, անունը, հայրանունը (եթե հայրանունը նշված է անձնագրում), զբաղեցրած հաստիքը, հանրային ծառայությունների համարանիշը և բնակության վայրի հասցեն.

3) զանգվածային լրատվության այն միջոցի (միջոցների) անվանումը, որը (որոնք) պետք է ներկայացնի հավատարմագրված լրագրողը.

4) հավատարմագրման ներկայացվող լրագրողի անձը հաստատող փաստաթղթի պատճենը (անձնագիր, նույնականացման քարտ) և երկու լուսանկար (3x4 չափսի).

5) լրատվական գործունեություն իրականացնողի և լրագրողի էլեկտրոնային փոստի հասցեները, հեռախոսահամարները.

6) հավատարմագրման ժամկետը, եթե այն նախատեսվում է մեկ նստաշրջանից պակաս ժամկետով:

6. Օտարերկրյա պետության օրենսդրության հիման վրա գործող լրատվական գործունեություն իրականացնողի ներկայացուցիչը հավատարմագրման համար սույն կարգի 5-րդ կետով նախատեսված դիմումին կից պետք է ներկայացնի նաև Հայաստանի Հանրապետությունում լրագրողի հավատարմագրման՝ Հայաստանի

Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից տրված վկայականի պատճենը:

7. Օտարերկրյա պետության օրենսդրության հիման վրա գործող լրատվական գործունեություն իրականացնողի ներկայացուցիչ լրագրողի համար Հայաստանի Հանրապետության հավատարմագրում չի պահանջվում, եթե Հայաստանի Հանրապետության տարածքում սահմանված կարգով գործում է տվյալ լրատվական գործունեություն իրականացնողի առանձնացված ստորաբաժանումը, որի անունից ներկայացվել է հավատարմագրման դիմումը:

8. Ազգային ժողովում կարող են հավատարմագրվել արդարադատության նախարարությունում հաշվառված՝ 1000 և ավելի տպաքանակ ունեցող օրաթերթերի, ամսագրերի և շաբաթաթերթերի, օրական 2000 և ավելի այցելու ունեցող (հավատարմագրման դիմումի օրվան նախորդող երեք ամիսների ընթացքում անընդմեջ գործող լրատվության միջոցի և այդ ամիսներից մեկի (դիմողի ընտրությամբ) այցելությունների միջին ցուցանիշի հիման վրա) և առնվազն ամենօրյա թարմացվող (յուրաքանչյուր օր՝ նվազագույնը 10 (տասը) քաղաքական նյութի հրապարակում) ինտերնետային լրատվության միջոցների, լրատվական գործակալությունների, ռադիոընկերությունների, հեռուստաընկերությունների և Երևանում թղթակցական կետեր ունեցող օտարերկրյա հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների լրագրողները, լուսանկարիչներն ու տեսաձայնագրման օպերատորները (այսուհետ՝ լրագրող):

9. Սույն կարգի 8-րդ կետի պահանջները բավարարող յուրաքանչյուր լրատվության միջոցից կարող է հավատարմագրվել ոչ ավելի, քան հինգ ներկայացուցիչ:

10. Չեն կարող հավատարմագրվել հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների ոչ լրատվական-վերլուծական կամ երգիծական բնույթի հաղորդաշարերի, Երևանում թղթակցական կետեր չունեցող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների, հասարակական

կազմակերպությունների, կուսակցությունների մամուլի ծառայությունների, մամուլի ակումբների, վերլուծական կենտրոնների, մանկապատանեկան, զվարճալի, ժամանցային, մարզական պարբերականների և հաշվառված, բայց վերջին երկու ամսում լույս չտեսած պարբերականների ներկայացուցիչները:

11. Հավատարմագրումն իրականացվում է հերթական նստաշրջանների գումարման ժամկետով, իսկ լրատվական գործունեություն իրականացնողի դիմումում ավելի պակաս ժամկետ նշվելու դեպքում՝ տվյալ ժամկետով:

Հերթական նստաշրջանների գումարման ժամկետով հավատարմագրված լրատվության միջոցը շարունակում է գործունեություն իրականացնել մինչև հաջորդ նստաշրջանի գումարման ժամկետի սկիզբը:

12. Ազգային ժողովի նստաշրջանի ընթացքում լրացուցիչ հավատարմագրում կատարվում է, եթե զանգվածային լրատվության միջոցը սկսել է գործել նստաշրջանի ընթացքում և բավարարում է սույն կարգի 8-րդ կետի պահանջները, կամ լրատվության միջոցը հավատարմագրված լրագրողի փոխարեն այլ լրագրողի հավատարմագրելու մասին դիմում է ներկայացրել: Այս դեպքերում նոր լրագրողի հավատարմագրումն իրականացվում է սույն կարգի 5-րդ կետով սահմանված ընթացակարգով՝ նույն լրատվության միջոցի հավատարմագրված նախկին լրագրողի հավատարմագրման վկայականը հանձնելուց հետո (եթե դա անհնար չէ):

13. Նստաշրջանի ընթացքում հավատարմագիրը կորցնելու դեպքում դրա փոխարեն տրվում է նոր հավատարմագիր՝ այդ մասին Աշխատակազմին հնգօրյա ժամկետում գրավոր ծանուցելուց հետո:

14. Աշխատակազմը վարում է լրագրողների հավատարմագրման էլեկտրոնային մատյան:

Լրագրողին (լրագրողներին) հավատարմագրելու համար լրատվական գործունեություն իրականացնողի դիմումը ստացվելուց հետո անմիջապես գրանցվում է հավատարմագրման էլեկտրոնային մատյանում, որտեղ նշվում են նաև սույն կարգի 5-րդ կետով նախատեսված տեղեկությունները: Հավատարմագրման էլեկտրոնային

մատյանում գրանցվում են լրագրողին հավատարմագրելու կամ հավատարմագրումը մերժելու մասին գրառումը, դրա մասին լրատվական գործունեություն իրականացնողին պաշտոնական գրություն ուղարկելու օրը, հավատարմագրման ժամկետը, հավատարմագրման դադարեցման մասին նշումը, հավատարմագրման դադարեցման համառոտ հիմնավորումը և անհրաժեշտ այլ տեղեկություններ: Հավատարմագրված լրագրողների ցուցակը հանձնվում է Ազգային ժողովի Բաղրամյան պողոտայի անցագրային կետ (Բաղրամյան պողոտա N 5): Ցուցակում փոփոխությունները և լրացումները կատարվում են լրագրողների հավատարմագրման էլեկտրոնային մատյանում կատարված գրառումներին համապատասխան՝ այդ գրառումները կատարվելուց անմիջապես հետո:

15. Սույն կարգի 5-րդ կետում նշված դիմումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, որոշում է ընդունվում լրագրողին հավատարմագրելու կամ նրա հավատարմագրումը մերժելու մասին: Այդ որոշման հիման վրա լրագրողների հավատարմագրման էլեկտրոնային մատյանում կատարվում է գրառում: Այդ մասին Աշխատակազմը եռօրյա ժամկետում պաշտոնապես (գրավոր կամ էլեկտրոնային եղանակով) տեղյակ է պահում լրատվական գործունեություն իրականացնողին: Հավատարմագրի ձևը հաստատում է Աշխատակազմի ղեկավարը:

16. Լրագրողի հավատարմագրումը մերժվում է, եթե՝

1) դիմումը ներկայացվել է հավատարմագրման համար սահմանված ժամկետից հետո.

2) լրատվական գործունեություն իրականացնողը չի բավարարում սույն կարգի 8-րդ կետի պահանջները.

3) առկա է սույն կարգի 10-րդ կետով նախատեսված հիմքերից որևէ մեկը.

4) առկա է լրագրողի հավատարմագրումը դադարեցնելու՝ սույն կարգի 17-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված հիմքերից որևէ մեկը.

5) լրատվական գործունեություն իրականացնողի կողմից հավատարմագրման ներկայացված լրագրողը հավատարմագրման պահին նախորդող մեկ տարվա ընթացքում Աշխատակազմի կողմից ստացել է երկու նախազգուշացում.

6) հավատարմագրման ներկայացվող լրագրողի հավատարմագրումը հավատարմագրման ներկայացման պահին նախորդող մեկ տարվա ժամանակահատվածում Աշխատակազմը վաղաժամկետ դադարեցրել է:

Եթե ներկայացված դիմումը չի պարունակում սույն կարգի 5-րդ կետով նախատեսված տեղեկությունները, այսինքն՝ առկա է ձևական սխալ, ապա Աշխատակազմը վերադարձնում է դիմումը՝ նշելով թերությունը: Թերությունները վերացվելու և եռօրյա ժամկետում կրկին ներկայացվելու դեպքում դիմումն ընդունված է համարվում ներկայացնելու սկզբնական օրը:

17. Հավատարմագրումը վաղաժամկետ դադարեցվում է, եթե՝

1) լրագրողը մահացել է, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ճանաչվել է մահացած, անհայտ բացակայող, անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) լրագրողի նկատմամբ նշանակվել է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ.

3) լրատվական գործունեություն իրականացնողի հավատարմագրված լրագրողն առերևույթ խախտել է ՀՀ օրենքների պահանջները, Աշխատակազմի ներքին կարգապահական կանոնները, Ազգային ժողովի շենքում և հարակից տարածքներում գտնվող անձանց համար պարտադիր վարքագծի կանոններ սահմանող իրավական ակտերի պահանջները կամ սույն կարգի պահանջները.

4) հավատարմագրումը դադարեցնելու մասին գրավոր դիմել է լրագրողին հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողը.

5) դադարել է գործել լրագրողին հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողը.

6) լրատվական գործունեություն իրականացնողի հավատարմագրված լրագրողը սույն կարգով և «Զանգվածային լրատվության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կանոնների խախտման համար գրավոր նախազգուշացվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին խախտում է սույն կարգով և «Զանգվածային լրատվության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կանոնները.

7) ի հայտ է եկել սույն կարգի 10-րդ կետում նշված հիմքերից որևէ մեկը:

Հավատարմագրված լրագրողի կողմից ՀՀ օրենքների պահանջները, Աշխատակազմի ներքին կարգապահական կանոնները, Ազգային ժողովի շենքում և հարակից տարածքներում գտնվող անձանց համար պարտադիր վարքագծի կանոններ սահմանող իրավական ակտերի պահանջները կամ սույն կարգի պահանջները խախտելու դեպքում Աշխատակազմն իր նախաձեռնությամբ կամ պատգամավորի կամ Ազգային ժողովի նիստերին ներկա գտնվող (մասնակցող) անձանց կամ Ազգային ժողովում գտնվող անձանց համապատասխան դիմումների հիման վրա կարող է սկսել հավատարմագրված լրագրողին գրավոր նախազգուշացնելու կամ հավատարմագրումը դադարեցնելու գործընթաց: Գրավոր նախազգուշացումն ուղարկվում է լրատվական գործունեություն իրականացնող այն անձին, որի անունից հավատարմագրվել է լրագրողը:

Լրատվական գործունեություն իրականացնողն իրավունք ունի հավատարմագրումը վաղաժամկետ դադարեցված լրագրողի փոխարեն հավատարմագրման ներկայացնելու այլ լրագրողի:

Լրատվական գործունեություն իրականացնողը պարտավոր է եռօրյա ժամկետում տեղեկացնել Աշխատակազմին հավատարմագրված լրագրողի աշխատանքից ազատման մասին և վերադարձնել վերջինիս հավատարմագիրն Աշխատակազմին:

18. Օտարերկրյա պետության օրենսդրության հիման վրա գործող լրատվական գործունեություն իրականացնողի ներկայացուցիչ լրագրողի հավատարմագրման

դադարեցման հիմք է նաև Հայաստանի Հանրապետությունում նրա հավատարմագրման դադարեցումը կամ հավատարմագրումից զրկելու մասին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կայացրած որոշումը:

19. Լրագրողի հավատարմագրման դադարեցման մասին եռօրյա ժամկետում ծանուցվում են լրագրողին հավատարմագրման ներկայացրած լրատվական գործունեություն իրականացնողը և այն լրագրողը (եթե հնարավոր է), որի հավատարմագրումը դադարեցվել է:

20. Հավատարմագրված լրագրողի մուտքն Ազգային ժողովի վարչական տարածք ազատ է արտահերթ և հերթական նստաշրջանների ընթացքում, ինչպես նաև այլ ժամանակահատվածում անցկացվող այն միջոցառումների ընթացքում, որոնց մասին ծանուցել է Աշխատակազմը: Ոչ աշխատանքային ժամին լրագրողը կարող է գտնվել Ազգային ժողովի վարչական տարածքում, եթե առկա է լուսաբանման ենթակա միջոցառում, որի մասին Աշխատակազմի կողմից նախապես ծանուցվել է լրատվության միջոցը:

Ազգային ժողովի նստավայրում լրագրողն իր աշխատանքը կազմակերպում է «Զանգվածային լրատվության մասին» օրենքին, սույն կարգին և Ազգային ժողովում սահմանված աշխատակարգի կանոններին համապատասխան:

21. Հավատարմագրված լրագրողն իրավունք ունի՝

1) ստանալու լրատվության միջոցների համար նախատեսված տեղեկատվություն.

2) նախապես տեղեկացված լինելու Ազգային ժողովի միջոցառումների անցկացման մասին, մասնակցելու այդ միջոցառումներին, բացառությամբ դրանց դռնփակ լինելու դեպքերի.

3) հավատարմագրված այլ լրագրողների հետ ազատորեն, առանց որևէ խտրականության օգտվելու հավատարմագրված լրագրողների համար ստեղծված պայմաններից.

4) օգտվելու լրագրողների համար օրենքով սահմանված այլ իրավունքներից:

22. Հավատարմագրված լրագրողը պարտավոր է՝

1) հարգել Ազգային ժողովի պատգամավորների և Աշխատակազմի աշխատակիցների օրինական շահերը, պատիվն ու արժանապատվությունը.

2) չխոչընդոտել Ազգային ժողովի պատգամավորների, Ազգային ժողովի նիստերին ներկա գտնվող (մասնակցող) անձանց և Աշխատակազմի աշխատակիցների ծառայողական պարտականությունների կատարմանը.

3) Ազգային ժողովի տարածք մուտք գործելիս ներկայացնել հավատարմագիրը, Ազգային ժողովի վարչական տարածքում գտնվելու ընթացքում հավատարմագիրը կրել հագուստի վրա այնպես, որ այն լինի տեսանելի (կախել պարանոցից).

4) պահպանել ՀՀ օրենքների, Աշխատակազմի ներքին կարգապահական կանոնների, Ազգային ժողովի շենքում և հարակից տարածքներում գտնվող անձանց համար պարտադիր վարքագծի կանոններ սահմանող ակտերի և սույն կարգի պահանջները.

5) իր մասնագիտական գործունեությունն իրականացնել Ազգային ժողովի նստավայրում առանձնացված հատուկ տեղերում՝ նիստերի դահլիճի դիմաց գտնվող սրահում, օթյակում և Ազգային ժողովի շենքում՝ պատգամավորի հետ նախապես համաձայնեցված հատվածում.

6) կատարել լրագրողների համար օրենքով սահմանված այլ պարտականություններ՝ հաշվի առնելով Ազգային ժողովի և Աշխատակազմի գործունեության առանձնահատկություններից բխող պահանջները:

23. Ազգային ժողովի պատգամավորների աշխատասենյակներում լրագրողները կարող են մասնագիտական գործունեություն իրականացնել միայն պատգամավորների համաձայնությամբ:

24. Ազգային ժողովը և Աշխատակազմը՝

1) որևէ ձևով կամ եղանակով չեն կարող գրաքննություն իրականացնել լրագրողի մասնագիտական գործունեության նկատմամբ.

2) հավատարմագրված բոլոր լրագրողների համար ապահովում են ոչ խտրական պայմաններ.

3) չեն կարող խոչընդոտել լրագրողի օրինական գործունեությանը:

25. Հերթական և արտահերթ նստաշրջանների ընթացքում, ինչպես նաև հերթական և արտահերթ նստաշրջաններից դուրս ժամանակահատվածում Ազգային ժողովում լուսաբանման ենթակա միջոցառումներին մասնակցելու նպատակով Աշխատակազմը չհավատարմագրված լրագրողներին կարող է տրամադրել անցագրեր:

26. Արտահերթ նստաշրջանների ընթացքում առաջացած հարաբերությունները կարգավորվում են դրան նախորդող հերթական նստաշրջանի համար ընդունված իրավական ակտերով:

27. Հավատարմագրվող լրատվության միջոցի ներկայացուցիչը պարտավոր է ծանոթանալ սույն կարգին, Աշխատակազմի ներքին կարգապահական կանոններին, Ազգային ժողովի շենքում և հարակից տարածքներում գտնվող անձանց համար պարտադիր վարքագծի կանոններ սահմանող իրավական ակտերին, ինչպես նաև հավատարմագիրը ստանալիս ստորագրել, որ ծանոթացել է և համաձայն է նշված փաստաթղթերով (իրավական ակտերով) սահմանված պայմաններին:

Ազգային ժողովի աշխատակազմի
ղեկավար-գլխավոր քարտուղար **Դ. Առաքելյան**